دولت أمير المؤمنين ادام الله ايامه ونصر اعلامه فى ايام الامير الاسفى
سلامه الكبير سيف الدين على بن احمد اعزه الله فى سنة تسعة وثمانين
وخمسمايه من الهجره النبويه

Եւ ետ բերել 'ի Բերիոյ զմանրաքանդակ մէնպէրն (ամ-
պիոն), զոր Սուլթան Նուրէտտին 'ի ժամանակի իւրում
տուեալ էր կազմել 'ի ձեռն ճարտարաց 'ի փղոսկրէ եւ
յաղնիւ փայտէ, և ետ կանգնել զայն 'ի մզկիթն Ադսայ,
ուր կայ ցարդ։ Զօրք Սալահատտինի ընկեցին զՄաչն ոս-
կեղէն բարձրացուցեալ 'ի դագաթ գմբէթին Սախրայի,
և ընդ քարշ ածին զայն մինչեւ 'ի լեառն Սիոնի, ուր ա-
զգա խորտակեցին։ Հրամայեաց Սուլթանն շինել մզկիթ
'ի բերդն, զոր Արաբացիք կոչեն տուն Դաւթի, ուր նը-
տէին Լատին իշխանք քաղաքին։ Մէլիք Ադիտալ օթագա-
յեալ էր յեկեղեցին Սիոնի, և զօրք նորա 'ի վրանս տուա-
ջի դրանն։ Տեսեալ Սուլթանին զհոյակապ եկեղեցին, որ
ասի տուն Յովակիմայ և Աննայի, եւ տեղի Ծննդեան Ս.
Կուսին, մերձ 'ի դուռն Պաղէստինայ կոչեցելոյ, կարգեաց
զայն 'ի դպրոց մանկտւոյն այլազգեաց, եւ անուանեաց
Սալահիյէ, և զկնի հինգ ամաց աւանդեաց 'ի ձեռս գիտ-
նոց, եդեալ արձանագիր 'ի վերայ դրան օրինակ զայս։

١ بسم الله الرحمن الرحيم
وما بكم من نعمة فمن الله

٢ هذه المدرسة وقفها مولانا الملك الناصر صلاح الدنيا والدين
سلطان الاسلام

٣ والمسلمين بن المظفر يوسف بن ايوب بن شادى محيي دولت
امير المؤمنين اعز الله

٤ انصره وجمع له بين خير الدنيا والاخرة على الفقهاء
من اصحاب الامام بن عبد الله

٥ محمد بن ادريس الشافعى رضى الله عنه
فى سنة ثمان وثمانين وخمس مايه